

ՊԱՏՃԱՌԻ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔ

Զանազանել պատճառ եւ հետեւանք:



Դիտէ՛ պատկերները. ի՞նչ պատահած է:

Ինչո՞ւ այդպէս պատահած է:

Երկու պատկերները ցոյց կու տան պատճառ եւ հետեւանք (արդիւնք):

Պատճառը՝ կատուին սեղանին վրայ ցատկիլն է:
Հետեւանքը՝ ծաղկամանին կոտրիլն է:

Ուրեմն, երբ պատճառը ըսեմք, պատասխանած կ'ըլլաք «ինչո՞ւ պատահած է» հարցումին. իսկ երբ արդիւնքը ըսեմք, պատասխանած կ'ըլլանք «ի՞նչ պատահած է» հարցումին:

Ամէն ինչ որ կը պատահի առնուազն մէկ պատճառի հետեւանքն է:

Կարդա՛ հետեւեալ նախադասութիւնները:
Մէկ գիծով ընդգծէ՛ պատճառը, իսկ երկու գի-
ծով՝ հետեւանքը:

1.- Օրինակ.

Այս առաւօտ Դաւիթ մոռցաւ կո-
շիկներուն կապերը (խրաց) կապել:
Հագիւ քանի մը քայլ քալեց, քիթին
վրայ ինկաւ

2.- Պետիկը շատ օդ լեցուց փուչի-
կին մէջ: Փուչիկը պայթեցաւ:

3.- Վարուժ թուարանութեան դասին մէջ ձա-
խողեցաւ: Ան դասը չէր սորված:

4.- Զօրաւոր անձրեւին պատճառով գետը յոր-
դեցաւ:

